պաշտպանելու ոչինչ չունեն. բայց նրանք էլ հարկաւորոած միջոցում զինաւորուում են...

Ջոլօները կառավարուում են իրանց պատրիարքի իշխանութեան ներքոյ, որ կոչւում է Մար-Շիմոն. դա ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր իշխանն է: Այժմեան Մար-Շիմոնը մի քաջ երիտասարդ է, որ միացրել է իր ձեռքում Քրիստոսի խաչը եւ ազատութեան սուրը: Բոլոր ժողովուրդը հպատակում է նրան որդիական հնազանդութեամբ: Մար-Շիմոնի օրինակը մի բացառութիւն է ամբողջ քրիստոնէական աշխարհում, որ հոգեւոր պատրիարքը միեւնոյն ժամանակ հասարակ զինոր է, հայրենիքի պաշտպան է: Հռոմի պապը նոյնպէս պահում է զինորներ, բայց պապի իշխանութիւնը մի կատարելագործոած խաբէութիւն է: Մար-Շիմոնը զինոր է, զինորի բոլոր ազնիւ յատկութիւններով:

Մար-Շիմոնի երկիրը մեծ մասամբ մաքրած է օտարազգիներից. այնտեղ կան փոքր թոով հայեր եւ մի քանի քրդի ցեղեր, որոնք բոլորն էլ հպատակում են պատրիարքի իշխանութեանը: Մար-շիմոնի երկիրը մի փակոած Չինաստան է, ուր օտարի ոտքը մուտք չէ գործում: Բայց Կարօն այժմ այնտեղ է. նա գնացած է պատրիարքի մօտ մի քանի գործերի համար տնօրինութիւններ անելու, յուսով եմ, որ նրա տեսութիւնը յաջող վախճան կունենայ...

Ջոլօների օրինակը մի մեծ խրատ է մեզ, հայերիս համար, թէ մենք էլ կարող ենք մեր լեռներում ազատ եւ հանգիստ ապրել, եթէ մեր ազատութիւնը կամենայինք պաշտպանել մեր սրով եւ արիւնով: Բայց մենք ունե՞նք այնպիսի հոգեւորականութիւն ինչպէս Մար-Շիմոնը. մենք ունե՞նք այնպիսի ժողովուրդ, ինչպէս Ջոլօն: Հայը սրից այնպէս է վախենում, ինչպէս դեւից...է:

ԽԱ. ՍԻՐՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վանքի տօնախմբութիւնը արդէն վերջացած էր: Ուխտաւորները սկսել էին վերադառնալ դէպի իրանց երկրները: Ծերունի որսորդի ընտանիքը նոյնպէս պատրաստւում էր առաւօտեան թողնել վանքը: Բայց իմ մէջ առաջ էր եկել մի զարմանալի փոփոխութիւն. ես մոռացել էի Մարօին, մոռացել էի Սօնային, մոռացել էի մօրս եւ քոյրերիս, որոնք այնքան սիրում էին ինձ, եւ աշխատում էին ինձ իրանց հետ մեր տունը տանել: Ես սիրահարոել էի Ասլանի վրայ: Կարծես թէ այդ ոգելից երիտասարդը կախարդած լինէր ինձ. ես չէի ուզում բաժանոել նրանից: Թէեւ Ասլանի խօսքերն ինձ շատ մութն էին, թէեւ ես դեռ պարզ չէի հասկացել, թէ ի՞նչ նպատակի է ձգտում նա, եւ ի՞նչ են ու-